ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արարատ 1-ն ՄՄԱՌՎ-ԷԱՃԱՊՁԲ-2026/89 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Արարատ-1 ՍՊԸ	ձմեռային վերարկու	ձմեռային վերարկու	Արարատ-1 ՍՊԸ	Ձմեռային բաճկոնի ձևը, դետալների տեղադրությունը և օգտագործվող նյութերը պետք է համապատասխանեն Պատվիրատուին ներկայացվող և համաձայնեցվող նմուշի չափանիշներին: Բաճկոնի օձիքը, թիկունքը, լանջափեշերը և թևքերը պետք է կարված լինեն 100% պոլիէսթեր, առնվազն 260 գ/մ² մակերեսային խտությամբ, անջրանցիկ, մուգ կանաչավուն գույնի կտորից՝ համաձայն ներկայացվող նմուշի: Գործվածքի բաղադրությունը պետք է

						համապատասխանի ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001 պահանջներին, մակերեսային խտությունը՝ ԳՈՍՏ 3811-72 պահանջներին։ Ներկի կայունությունը լվացման, թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ՝ համաձայն ԳՈՍՏ 9733-83, պետք է լինի նվազագույնը 4 բալ։ Բաճկոնը պետք է կոճկվի կենտրոնական, տրակտոր տեսակի №6 պլաստմասե շղթայով։ Կենտրոնական շղթայի ստորին հատվածում՝ շղթայի ներքին մասի զարդակարված երկայնակի կափույրին, պետք է առկա լինի լրացուցիչ ամրություն ապահովող մետաղական կոճգամ։ Բաճկոնին շղթայի միջոցով պետք է ամրացված լինի հանվող գլխանոց՝ ռեզիններով կարգավորվող, ձևավոր հովհարով և մետաղական ներդիրով։ Գլխանոցը պետք է լինի աստառով և դիմային հատվածում կոճկվի ինքնակպչուն ժապավեններով։ Օձիքը՝ լայն, կանգուն տեսակի, կենտրոնական շղթայի երկկողմանի պաշտպանիչ կափույրով։ Բաճկոնը պետք է ունենա դիմային և թիկունքային կոկետկաներ, ուսագոտին՝ ձևավոր։

						Ձախ լանջափեշի վերին ներքին հատվածում՝ կենտրոնական շղթային զուգահեռ, դրանից 1.5-2.5 սմ հեռավորության վրա, պետք է առկա լինի 16-18 սմ երկարությամբ շղթայով փակվող գաղտնի գրպան։ Լանջափեշերի ստորին երկու կողային հատվածներում, կենտրոնական կոճկվող շղթային զուգահեռ, պետք է լինեն պլաստմասե շղթայով փակվող գրպաններ՝ 21-23 սմ բացվածքով։ Թևքերը պետք է լինեն նեղ թեզանիքներով, կարգավորվող ինքնակպչուններով և էլաստիկ ժապավենով պատաններով։ Բաճկոնի աստառը պետք է լինի սև կամ մուգ կանաչավուն գույնի, առնվազն 70 գ/մ² մակերեսային խտությամբ մետաքսյա գործվածքից կամ ԳՕՍՏ 20272-2014, 8-С5-ВШ արտիկուլի կամ համարժեք՝ մուգ կանաչավուն գույնի, 100% վիսկոզա գործվածքից։ Մգդակումը պետք է իրականացված լինի շեղանկյունաձև՝ մոտ 8 սմ քայլով։ Բաճկոնը պետք է ունենա 2 հատ ներքին ծոցագրպան, որոնցից ձախը պետք է փակվի շղթայով, իսկ աջը՝

						կոճակով։ Բաճկոնի առաջամասի և հետնամասի ջերմամեկուսիչ ներդիրը պետք է մշակված լինի քամիապաշտպան կտորով և առնվազն 200 գ/մ² խտությամբ սինտեպոնով, իսկ թևքերի և գլխանոցի ջերմամեկուսիչ շերտը՝ առնվազն 120 գ/մ² խտությամբ սինտեպոնով։ Երկու թևքերին՝ դեպի ներս ուղղված հատվածներում, պետք է լինեն ուղղահայաց շղթայով փակվող գրպաններ։ Ձախ թևքի ուսագլխից 90 մմ ներքև պետք է ասեղնագործված լինի սեպաձև, 7.0 × 9.0 սմ չափսի «_____» թևքանշանը՝ ըստ Գնորդի կողմից ներկայացվող նմուշի։ Ձախ կրծքամասին պետք է առկա լինի 2.5 × 12.5 սմ չափսի «_____» գրությունը՝ ըստ Գնորդի կողմից ներկայացվող նմուշի։ Ուսադիրների հատվածներում պետք է առկա լինեն երկուական՝ 3.0 սմ չափսով փակ օղակներ և կոճակ-օղակներ՝ ուսադիրների ամրացման համար։ Չափսեր Մատակարարման ենթակա բաճկոնների չափսերը և համապատասխան քանակները Գնորդը Մատակարարին

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Арарат 1 в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՍՍԱՌ-ԷԱՃԱՊՁԲ-2026/89 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					

կներկայացնի պայմանագրի կնքումից հետո: Մատակարարը պարտավոր է ապրանքները մատակարարել Գնորդի կողմից ներկայացված չափսային բաշխմանը համապատասխան: Պիտակավորում Բաճկոնի ձախակողմյան փեշին՝ ներսի կողմից, ներքևի եզրից 5.0-7.0 սմ բարձրության վրա, պետք է կարված լինի պիտակ: Պիտակի վրա պետք է նշված լինեն՝ արտադրանքի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բաճկոնի կենտրոնական շղթայի գլխիկից պետք է կախված լինի չափս-հասակային ստուգիչ պիտակ: Փաթեթավորում Յուրաքանչյուր բաճկոն պետք է առանձին փաթեթավորված լինի թափանցիկ պոլիէթիլենային պարկով՝ մեկ պարկում 1 հատ: Բաճկոնները պետք է փաթեթավորված լինեն առնվազն եռաշերտ ստվարաթղթե արկղերում՝ յուրաքանչյուր արկղում առավելագույնը 5-6 հատ: Արկղերը պետք է լինեն պիտակավորված կամ

					համապատասխան տեղեկատվությունը պետք է տպագրված լինի արկղի վրա: Արկղի վրա պետք է նշված լինեն՝ ապրանքի անվանումը, քանակը, չափսերը, մատակարար կազմակերպության անվանումը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, առանց արտադրական թերությունների: Մինչև ամբողջ խմբաքանակի մատակարարումը Մատակարարը պարտավոր է ներկայացնել բաճկոնի նմուշ՝ Գնորդի հետ համաձայնեցման համար: Մատակարարվող ամբողջ խմբաքանակը պետք է համապատասխանի Գնորդի կողմից համաձայնեցված նմուշին: